

Գևորգյան Մարինե Գրիգորի
(Երևան, Հայաստան)

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԳՐՄԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

<<Տեղեկատվական պատերազմ>> և <<տեղեկատվական անվտանգություն>> հասկացությունները սերտորեն կապված են միմյանց հետ: Առաջին անգամ <<տեղեկատվական պատերազմ>> տերմինն օգտագործել է ամերիկյան փորձագետ Թոմաս Ռոնան՝ Բոինգ ֆիրմային 1976 թ. ներկայացրած իր հաշվետվության մեջ, որը վերնագրված էր <<Զենքի համակարգը և տեղեկատվական պատերազմը>>²⁰:

<<Տեղեկատվական պատերազմ>> տերմինը ներկայումս օգտագործվում է երկու նշանակությամբ:

Առաջին դեպքում այն ունի հետևյալ իմաստը՝ հակառակորդ երկրի քաղաքացիական բնակչության և զինված ուժերում որոշակի ապատեղեկատվության տարածումը²¹: Երկրորդ դեպքում տեղեկատվական պատերազմ ասելով՝ հասկանում ենք նպատակաուղղված գործողություններ, որոնք ձեռք են առնվում մի երկրի կողմից տեղեկատվական գերակայության ապահովման համար՝ ընդ որում ոչնչացնելով հակառակորդի տեղեկատվության պաշարները և պահպանելով սեփականը:

Տեղեկատվական պատերազմն ունի մի շարք բնորոշ գծեր՝ անկախ այն բանից, թե որ տարածաշրջանում և որ երկրների միջև է այն ընթանում: Ստորև ներկայացնենք դրանք.

1. տեղեկատվական պատերազմներում չեն օգտագործվում հոգեմետ միջոցներ, ուղղակի շանտաժ կամ սպառնալիք, ֆիզիկական հարձակումները և այլն:

2. Տեղեկատվական պատերազմի օբյեկտ է հանդիսանում ինչպես զանգվածային, այնպես էլ անհատական գիտակցությունը: Անհատական մակարդակում տեղեկատվական պատերազմ վարող կողմն աշխատում է հակառակորդի այնպիսի տուրյեկտների վրա, որոնց որոշումներն ունեն պետական կարևորություն (նախագահ, վարչապետ, արտաքին գործերի նախարար և այլն):

3. Տեղեկատվական ազդեցությունը կարող է իրագործվել ինչպես տեղեկատվական աղմուկի, այնպես էլ տեղեկատվական վասկումի միջոցով:

4. Տեղեկատվական պատերազմի վարման միջոց է հանդիսանում տեղեկատվության փոխանցման ցանկացած միջոց՝ սկսած ԶԼՄ-ներից մինչև փոստային ծառայություն²²:

²⁰Информационная война: история, день сегодняшний и перспектива, www.agentura.ru/equipment/psih/.../war/

²¹ Г. Г. Почепцов, Информационные войны. М.: «Рефл-бук», К.: «Ваклер», 2000. с. 42.

²² С.П. Расторгуев, Информационная война, л., 1999, №. 67.

Զանգվածային լրատվության միջոցների ի հայտ գալը և 21-րդ դարում հասարակությունների տեղեկատվական մակարդակի բարձրացումը տեղեկատվական պատերազմներն ավելի արդյունավետ դարձնելու պարարտ հող են ստեղծել: Տեղեկատվական պատերազմներն, ի տարբերություն իրական պատերազմների, ավարտ չունեն:

Տեղեկատվական պատերազմի խնդիրների ընդհանուր համապատկերի վրա ներկայացնենք ՀՀ ներգրավվածությունը տարածաշրջանային տեղեկատվական պատերազմներում:

Հայաստանի Հանրապետության դեմ տեղեկատվական պատերազմ մղող 2 հիմնական երկրները Ադրբեջանն ու Թուրքիան են:

Թուրքիան գործուն տեղեկատվական պատերազմ է վարում ՀՀ դեմ: Նա իր քարոզչությունն իրականացնում է առաջին հայացքից չեզոք երկրների կազմակերպությունների միջոցով:

Ինչպես հայտնի է, Հայաստանն ու Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի համար մղում են ոչ միայն քաղաքական պատերազմ, այլև տեղեկատվական պատերազմ, որն օրեցօր թեժանում է: Սա պայմանավորված է ինչպես դրա վարման մեթոդների բազմազանությամբ, այնպես էլ հակամարտության երկու կողմերի՝ պատերազմի այդ բաղադրիչի կարևորության ընկալմամբ:

Գաղտնիք չէ, որ ադրբեջանական կողմն արդեն բավական երկար ժամանակ փոխում է ինչպես Հայաստանի, այնպես էլ ընդհանրապես հայության դեմ ուղղված տեղեկատվական պատերազմի վարման մեթոդները: Մասնավորապես, ընթանում է տեղեկատվական դաշտի համակարգում, տեղեկատվական հակամարտության կենտրոնների գործունեության ղեկավարման և համակարգման գործում պետության դերի ուժեղացում: Հարկ է նշել, որ արժևորվում է նաև համացանցի դերը, քանի որ այն ամենամեծ ծավալի տեղեկություններ տարածելու հնարավորություն է տալիս:

Ինչպես ցանկացած պատերազմ՝ տեղեկատվական պատերազմներն էլ վարվում են 3 դաշտում՝ սեփական, չեզոք և հակառակորդի: Նրանց համար հակառակորդի՝ Հայաստանի դաշտում պատերազմ մղելը շատ դժվար է, քանի որ այստեղից գնացող տեղեկատվությունը Ադրբեջանում սահմանափակվում է: Նրանք մեր ուղարկած պատասխանները հաճախ չեն հրապարակում: Բնականաբար, օգտագործվում է չեզոք տեղեկատվական դաշտը՝ ողջ աշխարհով մեկ տարածելով Հայաստանի մասին ապատեղեկատվությունը:

Մեր օրերի քարոզչական մեքենաներից մեկը համարվում է համացանցը, որը դարձել է հակամարտության մի մասնիկը: ՀՀ և ԼՂՀ դեմ ուղղված տեղեկատվական պատերազմը Ադրբեջանում գտնվում է պետության հովանավորության ներքո: Ադրբեջանական պետական քարոզչամեքենան, նախագահ՝ Ի. Ալիևի գլխավորությամբ և հովանավորությամբ, չի խնայում ոչ նյութական և ոչ մարդկային ռեսուրսներ համացանցում հակահայկական քարոզչություն իրականացնելու համար:

Ադրբեջանն այսօր ավելացնում է իր ներկայությունը համացանցում՝ ի հաշիվ անընդհատ ավելացող լրատվական կայքերի, որոնք ակտիվորեն

ապատեղեկատվություն և քարոզչական բնույթի նյութեր են տարածում Հայաստանի դեմ: Վերջին ժամանակներս ադրբեջանական կողմը նման լրատվական կայք է բացել նաև Հայաստանի վիրտուալ .am դոմեյնային տարածքում:

Ադրբեջանի կողմից ՀՀ և ԼՂՀ դեմ մղվող տեղեկատվական պատերազմից մեկ խոսուն օրինակ ներկայացնենք: Ադրբեջանական լրատվական կայքերից մեկը՝ www.trend.az-ը հենց այն բազմաթիվ միջոցներից մեկն է, որով Ադրբեջանը մղում է տեղեկատվական պատերազմ ՀՀ և ԼՂՀ դեմ: Կայքը, ըստ who.is տեղեկատվի, համացանցում հայտնվել է 1995 թվականի փետրվարի 1-ին: Կայքի լեզուներն են՝ ռուսերենը, ադրբեջաներենը, պարսկերենը, արաբերենը և անգլերենը:

Հիմնական ուսումնասիրությունը կատարել ենք ակնհայտ հակահայկական թեմաներ ընդգրկող նյութերում: Ներկայացնենք դրանցից մեկը:

«Հայաստանի զինված ուժերը կրկին խախտում են հրադադարի ռեժիմը» վերնագիրը կողող հողվածը գրավեց մեր ուշադրությունը: Հատկանշական է, որ նման նյութեր հաճախ կարելի է հանդիպել հետպատերազմյան շրջանի ադրբեջանական մամուլի էջերում: Հանգամանք, որը ադրբեջանական կողմին փորձում է հավասարակշիռ դիրքերում դնել՝ ներկայացնելով գոհի, տուժողի կարգավիճակում: Վերոհիշյալ նյութը սկսվում է այսպես. «Հայաստանի ԶՈՒ-ը նախօրեին և անցած զիշեր Ֆիզուլիի շրջանի բարձունքներում տեղակայված դիրքերից գնդակոծեցին Ադրբեջանի ԶՈՒ-ի դիրքերը, այդ մասին ասվում է շարաթ օրվա, պաշտպանության նախարարության մամլո ծառայության կողմից տարածած հաղորդագրության մեջ: Գնդակոծությունը պատասխան կրակով կասեցվել է: Երկու հարավ-կովկասյան երկրների միջև կոնֆլիկտը ծագել է 1988 թվականին՝ ելնելով Ադրբեջանին ուղղված Հայաստանի տարածքային պահանջներից: Լեռնային Ղարաբաղն ու նրան սահմանակից յոթ շրջանները՝ Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը, գտնվում են Հայաստանի զինված ուժերի օկուպացիայի ներքո: Կողմերը 1994 թվականի մայիսին հռչակեցին կրակի դադարեցման ռեժիմ, և մինչ օրս ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո և Ռուսաստանի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի համանախագահությամբ դեռևս վարվում են անհաջող խաղաղ բանակցություններ: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ընդունած չորս որոշումները օկուպացված Լեռնային Ղարաբաղի և նրա սահմանակից տարածքների ազատման մասին մինչ օրս չեն կատարվում Հայաստանի կողմից»²³:

Այն ապատեղեկատվությունը, որը տեղ էր գտել նյութում, անհրաժեշտություն է առաջացնում նշել, որ վերջին շրջանում ճշացող են փաստերն այն մասին, որ հայկական կողմից կրակ է արձակվում միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, երբ ադրբեջանցիներն իրականացնում են դիվերսիա և անհրաժեշտ է լինում այն կանխել: Ինչ վերաբերվում է կոնֆլիկտին, նշենք, որ

²³ ВС Армении вновь нарушили режим прекращения огня - <http://clck.ru/9A2Aq> (հղումը փոքրացված է):

իրականում անցախյան հակամարտության ակունքները գալիս են դեռ 1921 թվականից, երբ նույն թվականի հուլիսի 5-ի բոլշևիկյան «կառավարիչների» անարդարացի որոշմամբ Արցախը հանձնվեց Ադրբեջանին, իսկ սկսած 1988 թվականից հայ ժողովուրդը ոտքի ելավ՝ տեր կանգնելու իր պատմական հայրենիքի և պահանջատիրության խնդրին: Ջարմանալի է, որ Ադրբեջանն իր տարածքի 20 տոկոսն է հաշվում մի պետություն, որը պատմականորեն Մեծ Հայքի նահանգ է եղել, իսկ այժմ էլ անկախ պետություն է՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն անունով:

1994 թվականի մայիսին զինադադարից հետո էլ փաստերը շատ են, թե քանի անգամ է ադրբեջանական կողմը տապալել հաշտության միջնորդությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից, իսկ պաշտոնական Երևանը միշտ ընդգծել է, որ խնդրո առարկա հարցում իր համար անընդունելի է միջազգային իրավունքի հայտնի նորմի՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի բացառումը:

Վերոհիշյալ օրինակը արտաքին սպառնալիքի և տեղեկատվական հասուն պատերազմի տիպիկ օրինակ է: Սպառնալիքները, սակայն, այդքանով չեն սահմանափակվում: Երբեմն ՀՀ-ն կանգնում է նաև ներքին սպառնալիքների առաջ:

1991 թ. վերականգնելով իր անկախությունը՝ Հայաստանի Հանրապետությունը դեռևս պահպանում է անցումային ժամանակաշրջանին բնորոշ կերպավորման առանձնահատկությունները, որոնցով էլ պայմանավորված են հիմնական ներքին սպառնալիքները: Հայաստանի մերձակա տարածքներում ի հայտ են եկել անվտանգության համար ներտարածաշրջանային և արտատարածաշրջանային սպառնալիքներ: Ներտարածաշրջանային սպառնալիքներն առավելապես պայմանավորված են տարածաշրջանում առկա ազգամիջյան հակամարտություններով, զինված բախումներով: Արտատարածաշրջանային սպառնալիքները հիմնականում բխում են տարածաշրջանի նկատմամբ բոլոր հիմնական ուժային կենտրոնների շահերի խաչաձևումից:

ՀՀ արտաքին սպառնալիքները ներկայացնենք խմբավորված ձևով: ՀՀ և ԼՂՀ տեղեկատվական անվտանգությանն ուղղված հիմնական սպառնալիքներն են՝

➤ Ադրբեջանի Հանրապետության կողմից ՀՀ և ԼՂՀ անվտանգության խարխլմանն ուղղված, համակարգված և անընդմեջ իրականացվող տեղեկատվական պատերազմը,

➤ Ադրբեջանի կողմից համապատասխան քաղաքականության վարում, որով այդ պետությունը փորձում է խթանել դարաբաղյան հակամարտության լուծումն իր օգտին:

➤ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության իրողության հերքումը տեղեկատվական-քարոզչական տարաբնույթ միջոցների կիրառմամբ:

➤ Մշտական սպառնալիքներ ՀՀ և ԼՂՀ պետական քաղաքականության տեղեկատվական ապահովմանը:

➤ Սպառնալիքներ՝ ուղղված հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, մասնավորապես հայկական պատմամշակութային հուշարձանների ոչնչացումն ու այլափոխումը տարածաշրջանային պետությունների տարածքում,:

➤ ՀՀ մասնակցությունը տարածաշրջանային նախագծերին սահմանափակելու փորձերը²⁴:

Հայտնի ճշմարտություն է, որ ցանկացած երկիր, հատկապես պատերազմոդ, պետք է ունենա տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, որտեղ ամրագրված կլինեն բոլոր տեղեկատվական վտանգներն ու սպառնալիքները և դրանք հաղթահարելու միջոցները: Ընդ որում՝ պետք է հստակ ամրագրված լինի, թե տեղեկատվական հարձակումների դեպքում ո՞ր կառույցը պետք է ստանձնի պատասխանատվություն:

Վերը նշված սպառնալիքների կանխման և դրանց հետևանքների վերացման, պետության և համարակության կայուն զարգացման ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության վարած քաղաքականության հիմքում դրվում է ազգային անվտանգության ռազմավարությունը²⁵ և Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը²⁶:

ՀՀ Ազգային Անվտանգության Ռազմավարության վերլուծությունից պարզ է դառնում, որ պետությունը հստակ սահմանել է ազգային անվտանգության դեմ ուղղված հնարավոր սպառնալիքներն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության ոլորտներում, ամրագրվել են դրանց դեմ պայքարի միջոցները:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության առանցքային խնդիրն է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը:

Այսօր առանձնահատուկ հրատապություն են ձեռք բերել Ազգային Անվտանգության (ԱԱ) բաղադրամաս հանդիսացող Տեղեկատվական անվտանգության (ՏԱ) խնդիրները: Համաձայն ժամանակակից պատկերացումների, ազգային անվտանգություն (ԱԱ) հասկացությունը ներկայացնում է երեք բաղադրամասերի՝

- ռազմաքաղաքական անվտանգության,
- սոցիալ-տնտեսական անվտանգության և
- տեղեկատվական անվտանգության ամբողջություն:

Այդ բաղադրամասերից որևէ մեկի անտեսումը կամ թերազնահատումը թերի է դարձնում ցանկացած ԱԱ հայեցակարգ: Դրան զուգահեռ, ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և տեղեկատվական ոլորտները ներկայումս ինտեգրվում են, այսինքն՝ ԱԱ բաղադրամասերի միջև սահմանները հաճախ խիստ պայմանական են: Իրենց հերթին, ԱԱ վերոհիշյալ ոլորտներն

²⁴ Ա. Աթանեսյան, Սպառնալիքներ ՀՀ տեղեկատվական անվտանգությանը. եռամսյակային վերլուծություն, <<21-րդ դար>>, թիվ 6, Եր., 2010, էջ 27:

²⁵ Տե՞ս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, 07.02.2007:

²⁶ ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, Հավելված ՀՀ նախագահի 2009թ. հունիսի 26-ի ՆԿ-97-Ն կարգադրություն:

ընդգրկուն են և հանդիսանում են այլ բաղադրամասերի միասնություն: Մասնավորապես՝ տեղեկատվական անվտանգությունը (ՏԱ) ծավալուն և բովանդակալից հասկացություն է, որը ներառում է ոչ միայն տեղեկատվական-տեխնիկական համակարգերի ապահովության խնդիրները, այլև այն ամենը, ինչ վերաբերում է հոգևոր-հոգեբանական, մտավոր-գիտելիքային ոլորտներին:

Ի մի բերելով նշենք, որ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության բաղկացուցիչ մասն է և իր ազդեցությունն է թողնում Հայաստանի Հանրապետության ազգային շահերի պաշտպանվածության վրա, հասարակության և երկրի կենսագործունեության տարբեր բնագավառներում: Սպառնալիքները Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության նկատմամբ և անվտանգության ապահովման ձևերն ընդհանուր են բոլոր բնագավառների համար:

**Жабборов Неъмат Исмоилович
(Тошкент, Ўзбекистон)**

ЯССАВИЙ МЕРОСИНИНГ ТАРБИЯВИЙ АҲАМИЯТИ

Буюк шоир ва атоқли файласуф Хожа Аҳмад Яссавийнинг бой илмий-маънавий мероси катта тарбиявий аҳамиятга моликдир. Ушбу мақола буюк мутафаккирнинг асарларини жамият аъзоларини маънавий баркамол қилиб тарбиялаш нуқтаи назаридан ўрганишга бағишланган. Тадқиқотчи қўлёзма манбалар ва нашр қилинган китоблардаги маълумотларни таҳлил қилиш орқали шундай хулосага келадики, Яссавий меросида таълим-тарбия масалаларига алоҳида эътибор қаратилган.

Калит сўзлар ва таянч иборалар: мерос, қўлёзма, асар, таълим, мерос, ҳикмат, Яссавий, Аъзам, Ўзбекистон.

ВОСПИТАТЕЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ НАСЛЕДИЯ ЯССАВИ

Богатое научно-духовное наследие великого поэта и выдающегося философа Ходжи Ахмада Яссави имеет огромное воспитательное значение. Данная статья посвящена изучению произведений великого мыслителя с точки зрения воспитания членов общества духовно богатым. Исследователь путём анализа данных, приведённых в различных рукописях и изданиях приходит к выводу о том, что в наследии Яссави уделяется особое внимание вопросу воспитания.

Ключевые слова: наследие, рукопись, произведение, образование, премудрость, Яссави, Аъзам, Узбекистан.

TRAINING SIGNIFICANCE OF YASSAWI'S HERITAGE

The rich scientifically spiritual heritage of famous poet and outstanding philosopher Khwaja Ahmad Yassawi has a greet educational-training significance. This article is devoted to studying the works by prominent thinkers from the point of their importance in training members of society spiritually perfect. Researcher by